



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

2018թ. սեպտեմբերի 25

N 177

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՅՈՒՐԻԿ ԱԶԱՏՅԱՆԻՆ  
ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 162-րդ հոդվածների դրույթներով, ««Քաղաքացիական ծառայության մասին»» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը՝ **հրամայում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրիկ Ազատյանին տալ ամենամյա արձակուրդ՝ 2016 թվականի նոյեմբերի 22-ից 2017 թվականի նոյեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 24 աշխատանքային օր տևողությամբ 2018 թվականի հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 1-ը ներառյալ:

Հիմք՝ Յու.Ազատյանի 2018 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

Լ.ԳԵՎՈՐԳՅԱՆ